Կոմիտէն դեռ ևս պաշտօնական դիմում կամ յայտարարութիւն չէ արել հարևան հանրապետութիւններին. ըստ երևոյթին, Բաղուն գրաւած է առանց դիմադրութեան, պաշտօնեաները մնում են իրենց տեղերում, արտաքին կեանքը խանգարուած չէ, կառավարութեան և խորհրդարանի անդամներից ոչ մէկը ձերբակալուած չէ: Ռադիօի հաղորդագրութեամբ Ադրբէջանը ճանաչուած է անկախ խորհրդային իշխանութիւն. տեղիս ադրբէջանեան ներկայացուցչի ասելով արտաքին յարաբերութիւնների հարցը կորոշուի մօտ օրերս. դաշնակից ներկայացուցիչների Բաղուում մնալու կամ հեռանալու խնդիրն ևս կը վճռուի մօտ օրերս:

Բաղուի գրաւումից առաջ ուղիղ հեռագրալարով ինձ հաղորդեցին, թէ Ադրբէջանը յայտարարում է, որ բոլշևիկները մօտենում են իր սահմաններին, բայց ինքը ոյժ չունի դիմադրելու, որովհետև զօրքերը զբաղուած են Ղարաբաղում, ուստի Հայաստանի կառավարութիւնից երաշխաւորութիւն է պահանջում, որ զօրքերը յետ քաշելու դէպքում յարձակում չլինի. դիմում է արուած նաև Վրաստանին, որը պատասխանել է, թէ իր օգնութիւնն անմիջական լինել չի կարող: Մեր պատասխանն այդ հաղորդագրութեան արդէն հրատարակուած է մամուլում, բայց նախ քան նրա տեղ հասնելը, ադրբէջանեան զօրքերը քաշուել են Եալամայից և ընդունել վերջնագիրը:

Դէպի նոր կառավարութիւնը մեր վերաբերմունքն առայժմ չէզոք է. միջազգային օրէնքների համաձայն, յեղաշրջումից յետոյ, եթէ որևէ պետութեան ներկայացուցիչը յետ չի կանչւում, նշանակում է նրա կողմից ընդունւում է նոր հաստատուած պետակազմը, և մենք հրահանգել ենք մեր ներկայացուցչին շարունակել իր պարտականութիւնները, եթէ նրանց կողմից որևէ նոր առաջարկ չի լինի:

Սակայն, կարծում ենք, որ դրութիւնը այսպէս անորոշ շարունակուել չի կարող. առաջին քայլը՝ խօսելու իր հարևանների հետ պէտք է անի Ադրբէջանը:

Ադրբէջանի յեղաշրջման հետ կապ ունի նաև այն հարցը, թէ մենք ի՞նչ վերաբերմունք ունենք դէպի Խորհրդային Ռուսաստանը: Մեր կայուն տեսակէտն այն է, որ Հայաստանը չէզոք է հանդէպ Ռուսաստանի քաղաքացիական կռիւը և այդ կռիւը վարող ուժերը: Կառավարութեան ու հայ հասարակութեան կարծիքը արտայայտուել են բոլշևիկեան գործունէութեան ընթացքում հանդէս եկած միայն մէկ երևոյթի վերաբերմամբ, այն է՝ տաճկա-բոլշևիկեան դաշնագրութեան, որ մեր աչքում նկատւում է Հայաստանի շահերի դէմ ուղղուած մի քայլ: Երբ պարզաբանուեց այդ խնդիրը և հաստատուեց, որ Հայաստանում գործող մի քանի բոլշևիկներ աշխատում են հէնց այդ ուղղութեամբ, կառավարութիւնը հարկադրուած եղաւ միջոցներ ձեռք առնել և առաջարկեց նրանց թողնել Հայաստանի սահմանները: Կարեւոր եմ համարում նաև յայտնել, որ շատ բոլշևիկներ հակառակ են եղել վերոյիշեալ դաւադրութեան և նրան նպաստող գործունէութեան, յայտարարել են նրանք այդ մասին կառավարութեան, և կառավարութիւնը նրանց ոչ մի կերպ չի անհանգստացրել: Բացի դրանից, մեր և բոլշևիկեան կազմակերպութեան միջև տեղի չէ ունեցել որեւէ դէպք, և մենք մինչեւ օրս էլ մնացել ենք չէզոքի դերում:

Այնուամենայնիւ, չպէտք է անտեսել, որ բոլշևիկներն են հանդիսանում Ռուսաստանի իրական ուժը. այդ փաստը մասնաւորապէս Եւրոպայում, ուր նկատւում է դէպի Ռուսաստանն ունեցած քաղաքականութեան բեկումն: Ֆրանսական խորհրդարանը յանձնարարել է կառավարութեան՝ բանակցութիւններ վարել Ռուսաստանի հետ. նոյն տեսակէտին է և Իտալիան. Ամերիկայի դիրքը յայտնի է ձեզ. այն, ինչ հնարաւոր